ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 29.01.2024թ. հ.100 գրության՝ Արին Բերդի փողոցի կոյուղագծի վթարի վերաբերյալ, տեղեկացվում է, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը, Արին Բերդի փողոցի 5-րդ նրբ. հ.1/2 հասցեում տեղի ունեցած կոյուղագծի վթարի վերաբերյալ, միջնորդագիր է ուղարկվել «Վեոլիա ջուր» ՓԲԸ՝ խնդիրն ուսումնասիրելու և կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ